ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-26/11

Ջրօգտագործման թույլտվության ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակման ծառայությունների մատուցման մասին

ք. Երևան «____» _____ 2026 թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղար՝ Տիգրան Իգիթյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և անհատ ձեռնարկատեր Գոհար Գրիգորյանը, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, այսուհետ առանձին՝ «Կատարող», իսկ միասին նաև «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ «Պայմանագիր») հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով կատարել սույն պայմանագրի 1.2 կետում նշված Ծառայությունը և դրա արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել պատշաճ կերպով կատարված Ծառայությունի արդյունքը և վարձատրել դրա համար՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

1.2. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մատուցել հետևյալ ծառայությունները՝ **Պատվիրատուի ջրօգտագործման թույլտվության (ՋԹ) ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի մշակումը և գործընթացի սպասարկումը**, ինչը ներառում է.

- Առկա հորատանցքի անձնագրի կազմման և հիդրոերկրաբանական տեղեկատվության տրամադրման հայտի ձևակերպում և մուտքագրում էլեկտրոնային հարթակ:

- Հորատանցքի անձնագրի և հիդրոերկրաբանական տեղեկատվության կազմման համար անհրաժեշտ բոլոր վճարումների իրականացում Կատարողի միջոցների հաշվին (ներառված է պայմանագրի ընդհանուր արժեքում):

- Ջրօգտագործման և ջրահեռացման անհատական չափաքանակների (նորմաների) հաշվարկ-հիմնավորման մշակում և մուտքագրում համապատասխան էլեկտրոնային հարթակ:

- Թույլատրելի սահմանային արտահոսքի (ԹՍԱ) նորմաների նախագծի մշակում և մուտքագրում համապատասխան էլեկտրոնային հարթակ:

- Ջրօգտագործման թույլտվության ստացման հայտի կազմում և մուտքագրում էլեկտրոնային հարթակ՝ ստորերկրյա ջրային ռեսուրսից խմելու-կենցաղային նպատակով ջրառի իրականացման տվյալների ներառմամբ:

- Ջրօգտագործման թույլտվության ստացման համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարում Կատարողի կողմից (ներառված է պայմանագրի ընդհանուր արժեքում):

2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

2.1. Կատարողը պարտավորվում է 1.2. կետում նշված Ծառայությունները սկսել սույն պայմանագրի երկկողմանի ստորագրման և 3.2. կետով սահմանված կանխավճարի ստացման պահից:

2.2. Ծառայությունների կատարման վերջնաժամկետը սահմանվում է սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60 աշխատանքային օրվա ընթացքում: Սույն ժամկետի մեջ չի հաշվարկվում պետական լիազոր մարմինների կողմից հայտերի քննարկման համար օրենքով սահմանված ժամանակահատվածը:

2.3. Ծառայությունների պատշաճ կատարումը և արդյունքների հանձնում-ընդունումը արձանագրվում է երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրություն (ակտ) ստորագրելու միջոցով՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ում սահմանված ձևանմուշի:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված Ծառայությունների ընդհանուր գինը կազմում է 993,300 (ինը հարյուր իննսուներեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը, ինչպես նաև հորատանցքի անձնագրավորման համար հիդրոերկրաբանական տեղեկատվության տրամադրման վճարները և պետական տուրքը:

3.2. Պայմանագրի ստորագրումից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն փոխանցում է կանխավճար՝ ընդհանուր գումարի 30%-ի չափով, որը կազմում է 297,990 (երկու հարյուր իննսունյոթ հազար ինը հարյուր իննսուն) ՀՀ դրամ:

3.3. Գումարի մնացած մասը՝ 695,310 (վեց հարյուր իննսունհինգ հազար երեք հարյուր տաս) ՀՀ դրամը, Պատվիրատուն վճարում է հանձնման-ընդունման ակտի ստորագրումից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.4. Վճարումները կատարվում են անկանխիկ՝ Կատարողի բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

4.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից իրականացվող Ծառայությունների ընթացքը և որակը:

4.1.2. իրականացված Ծառայությունների թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել կատարողին՝ անկախ դրանց հայտնաբերման ժամկետից:

4.2. Պատվիրատուն պարտավոր է՝

4.2.1. Կատարողին տրամադրել Ծառայությունների համար անհրաժեշտ բոլոր ելակետային տվյալները, փաստաթղթերը և լիազորագրերը սույն պայմանագիրը կնքելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4.2.2. Ծառայությունների իրականացման արդյունքների մեջ թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին ողջամիտ ժամկետում տեղյակ պահել Կատարողին.

4.2.3. Սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Կատարողին վճարել պատշաճ կերպով կատարված Ծառայությունների համար:

4.3. Կատարողն իրավունք ունի՝

4.3.1. Պահանջել Պատվիրատուից սույն պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետներում վճարել պատշաճ կերպով կատարված Ծառայությունների դիմաց.

4.3.2. Սույն պայմանագրից բխող իր պարտավորությունների կատարմանը մասնակից դարձնել այլ անձանց՝ հանդես գալով որպես գլխավոր կապալառու, միայն պատվիրատուի գրավոր համաձայնությամբ:

4.4. Կատարողը պարտավոր է՝

4.4.1. Ծառայություններն իրականացնել պատշաճ որակով, սույն պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան և սահմանված ժամկետում.

4.4.2. Իրականացնել սույն պայմանագրի 1.2 կետում նշված պետական և այլ պարտադիր վճարումները ստացված կանխավճարի հաշվին.

4.4.3. Պատվիրատուի պահանջով և պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում անհատույց վերացնել բոլոր հայտնաբերված թերությունները.

4.5. Ծառայությունների կատարման ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.2.1. կետով սահմանված ժամկետում և կարգով Կատարողին չի տրամադրում անհրաժեշտ ելակետային տվյալները կամ լիազորագրերը՝ մինչև դրանց փաստացի տրամադրման պահը:

4.6. Կողմերն ունեն նաև սույն պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Սույն պայմանագրի պայմանները խախտելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանգրով սահմանված կարգով:

5.2. Սույն պայմանագրի 2.2. կետով սահմանված Ծառայությունների կատարման ժամկետները Կատարողի մեղքով խախտելու դեպքում (բացառությամբ պետական մարմինների կողմից հայտերի քննարկման և ձգձգման ժամկետների), Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ չկատարված Ծառայության արժեքի 0.1% (զրո ամբողջ

մեկ տասնորդական տոկոսի) չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար, բայց ոչ ավելի, քան պայմանագրի ընդհանուր գնի 10%-ը:

5.3. Սույն պայմանագրի 3.2. և 3.3. կետերով սահմանված վճարման ժամկետները խախտելու դեպքում Պատվիրատուն Կատարողին վճարում է տույժ՝ ժամանակին չվճարված գումարի 0.1% (զրո ամբողջ մեկ տասնորդական տոկոսի) չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար, բայց ոչ ավելի, քան պայմանագրի ընդհանուր գնի 10%-ը:

5.4. Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու պատասխանատվությունից:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	Անհատ ձեռնարկատեր՝ «Գոհար Գրիգորյան Յուրիկի»
Հասցե՝ք. Երևան, Արշակունյաց-63	Հասցե՝ ՀՀ, Երևան, Բաղյան 7, բն. 5
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 26845197
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/հ 900011175016	Հ/հ 2472405052290006
Քրեակատարողական ծառայության գլխավոր քարտուղար	Digitally signed by GRIGORYAN GOHAR 5105820134 Date: 2026-04-08 18:50:04
_____Տ. Իգիթյան	_____Գ. Գրիգորյան
Հեռ.՝. +374 60-37 18 61	Հեռ.՝. +374 97-31 08 78
IGITYAN TIGRAN 3512780423	Digitally signed by IGITYAN TIGRAN 3512780423 Date: 2026.04.09 10:42:55 AMT

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«___» _____ 2026թ. կնքված

Թիվ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-26/11 Պայմանագրի

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ____

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» _____ 202 թ.

Պայմանագրի անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» _____ 202 թ.

Պայմանագրի համարը՝ N _____

Պատվիրատուն և Կատարողը, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ 2-րդ կետի 2.3 ենթակետի պայմանները, կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը՝ «___» _____ 202 թ.՝ «___» _____ 202 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Ծառայությունները.

Հ/Հ	Անվանումը	Քանակը	Միավորի արժեքը (հազար ՀՀ դրամ)	Կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար ՀՀ դրամ)	Վճարման ժամկետը (ըստ վճարման ժամանակացույցի)
1						
Ընդամենը						

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
ազգանուն	ազգանուն